«Նորք-Մարաշ» Բժշկական Կենտրոն ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
վերաբերյալ

Բովանդակություն

3	Անկախ աուդիտորի եզրակացություն
6	Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
7	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
8	Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
9	Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
10	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
11	Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ

Ընկերության գտնվելու վայրը՝	Հայաստանի Հանրապետություն
Իրավական ձևը՝	Փակ Բաժնետիրական Ընկերություն
Հիմնական գործունեության նկարագիրը՝	Ընկերության գործունեության բնույթը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում
Տնօրեն՝	Միքայել Ադամյան

"Ֆոր Էյ Քնսալթինգ" ՓԲԸ "Four A Consulting" CJSC

audit — accounting — advisory — assurance

ՀԱՊ ՀԿ Ռեեստր 1 20 0219 CAA NGO Register 1 20 0219
Հասցե Նալբանդյան 50/136 , ք Երևան ՀՀ, www. 4aconsulting.am Address Nalbandyan 50/136, Yerevan, RA
Հեռախոս +374(10) 52 08 47 info@4aconsulting.am Telephone +374(10) 52 08 47

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ներկայացվում է «Նորք-Մարաշ» Բժշկական Կենտրոն Փակ Բաժնետիրական Ընկերության ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Նորք-Մարաշ» Բժշկական Կենտրոն ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը՝ 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ) համաձայն: Այդ ստանդարտներով սահմանված մեր պարտականությունները ներկայացված են "Աուդիտորի պարտականությունները ֆինանսական հաշվետվությունների աուդիտի վերաբերյալ" հատվածում: Հաշվապահների Վարքագծի Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՎՄՍԽ) կողմից հաստատված "Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի" (ՊՀՎ կարգ) համաձայն մենք պահպանել ենք մեր անկախությունը Ընկերության նկատմամբ և պահպանել ենք էթիկայի այլ սկզբունքների նկատմամբ մեր պարտականությունները համաձայն այդ ստանդարտների և ՀՎՄՍԽ Վարքագրքի:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Ընկերության 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այս ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով 2022 թվականի հունիսի 30-ին արտահայտել է չձևափոխված կարծիք այդ հաշվետվությունների վերաբերյալ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելու ընթացքում ղեկավարությունը պարտավոր է գնահատել Ընկերության գործունեության անընդհատությունը, բացահայտելու գործունեության անընդհատության վերաբերյալ խնդիրները և առաջնորդվել հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքով, եթե ղեկավարությունը չի պատրաստվում լուծարել ընկերությունը կամ դադարեցնել գործունեությունը կամ չունի այլընտրանք քան գործունեության դադարեցումն է:

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվություն

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ամբողջությամբ վերցրած, բոլոր էական առումներով զերծ են սխալներից՝ պայմանավորված խարդախություններով կամ բացթողումներով, և պատրաստել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը ամենաբարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ համաձայն աուդիտը մշտապես կհայտնաբերի էական սխալները և բացթողումները երբ դրանք առկա են: Սխալները կարող են առաջանալ խարդախության կամ բացթողումների հետևանքով և համարվում են էական, եթե առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել օգտագործողների տնտեսական որոշումների վրա, որոնք կայացվում են հիմք ընդունելով ֆինանսական հաշվետվությունները:

Աուդիտի ընթացքում, որն իրականացվել է ԱՄՍ համաձայն, մենք առաջնորդվել ենք մասնագիտական դատողությամբ և պրոֆեսիոնալ կասկածամտությամբ: Մենք նաև.

- Հատկորոշել և գնահատել ենք էական սխալների ռիսկերը ֆինանսական հաշվետվություններում՝ պայմանավորված խարդախություններով և բացթողումներով, նախագծել և իրականացրել ենք աուդիտորական ընթացակարգեր այս ռիսկերին պատասխանելու նպատակով և ձեռք ենք բերել բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքը արտահայտելու համար: Խարդախության հետևանքով առաջացած սխալի չհայտնաբերման ռիսկը ավելի բարձր է քան բացթողնման հետևանքով առաջացածինը, քանի որ խարդախությունը կարող է ընդգրկել գաղտնի պայմանավորվածություններ, խարդախություն, նպատակային բացթողում, յուրացում կամ ներքին վերահսկողական նորմերի շրջանցում:

- Պատկերացում ենք կազմել ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ, որպեսզի նախագծենք աուդիտորական ընթացակարգերը տվյալ հանգամանքներին համապատասխան, բայց ոչ կարծիք արտահայտել Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ:

- Գնահատել ենք Ընկերության ղեկավարության կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանությունը և հաշվապահական ողջամիտ գնահատումները և կից բացահայտումները:

- Որոշել ենք ղեկավարության կողմից օգտագործված հաշվապահական հաշվառման գործունեության անընդհատության սկզբունքի օգտագործման համապատասխանությունը՝ ելնելով հավաքագրված աուդիտորական ապացույցներից, եղել են արդյոք էական

անորոշություններ, որոնք կարող են առաջացնել կասկածներ, այն մասին, որ Ընկերությունը կարող է ունենալ խնդիրներ գործունեության անընդհատության հետ կապված: Եթե կան նման անորոշություններ, ապա մենք պարտավոր ենք մեր եզրակացությունում օգտագործողների ուշադրությունը հրավիրել այդ բացահայտումներին, իսկ եթե այդ բացահայտումները բավարար չեն ապա պարտավոր ենք ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են աուդիտորական ապացույցների վրա, որոնք ձեռք են բերվել մինչև մեր կողմից աուդիտորական եզրակացություն տալու ամսաթիվը: Սակայն հետագա դեպքերը և հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերությանը դադարերեցնել գործունեության անընդհատությունը:

- Գնահատել ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր բնութագիրը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, և թե արդյոք ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այպես, որպեսզի համարվի ճշմարիտ ներկայացում:

Մենք ծանուցել ենք ղեկավարությանը աուդիտի շրջանակների, ժամանակացույցի և կարևոր բացահայտումների մասին՝ ներառյալ ներքին վերահսկողության համակարգում առկա թերությունների մասին, որոնք մենք հայտնաբերել ենք աուդիտի ընթացքում:

21 ապրիլի 2023թ.

Անիկ Մարտիրոսյան

Տնօրեն-բաժնետեր/առաջադրանքի ղեկավար

«ՉՈՐ ԷՅ ԽՈՍԱԼՏԻՆԳ»
"FOUR A CONSULTING"
00148693

	Ծնթ.	2022 հազար դրամ	2021 հազար դրամ
Հասույթ	5	6,636,696	6,326,565
Ինքնարժեք	7	(5,870,920)	(5,759,548)
Համախառն եկամուտ		765,776	567,017
Իրացման ծախսեր		(2,873)	(2,248)
Վարչական ծախսեր	7	(549,995)	(552,956)
Այլ եկամուտ	6	203,884	212,430
Այլ ծախսեր	7	(4,868)	(25,482)
Գործառնական եկամուտ		411,924	198,761
Ֆինանսական ծախսեր		(97,796)	(142,989)
Այլ օգուտ/(կորուստ)		754,035	600,951
Շահույթ մինչև հարկումը		1,068,163	656,723
Շահութահարկի գծով ծախս	8	(34,314)	(4,438)
Տարվա զուտ շահույթ		1,033,849	652,285
Այլ համապարփակ ֆինանսական եկամուտ		-	-
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		1,033,849	652,285

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Ընկերության ղեկավարության կողմից 2022թ. ապրիլի 21-ին:

Միքայել Աղասյան
Տնօրեն

Գայանե Սառիկյան
Փորձագետ հաշվապահ ՀԳԳՀ 3 21 0614

«Նորք-Մարաշ» Բժշկական Կենտրոն ՓԲԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթ.	2022 հազար դրամ	2021 հազար դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	9	665,157	663,782
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	10	297,567	449,098
Դրամական միջոցներ		234,574	31,041
		1,197,298	1,143,921
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	11	3,947,785	4,333,059
Ոչ նյութական ակտիվներ		48,068	24,672
Հետաձգված հարկային ակտիվ		16,729	5,969
		4,012,582	4,363,700
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		5,209,880	5,507,621
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր	12	-	127,933
Եկամուտներին վերաբերող շնորհ		19,180	16,081
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	13	889,793	1,234,981
		908,973	1,378,995
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր	12	2,660,026	3,361,369
Ակտիվներին վերաբերող շնորհ	14	733,928	894,151
Հետաձգված հարկային պարտավորություն		-	-
		3,393,954	4,255,520
Ընդամենը պարտավորություններ		4,302,927	5,634,515
ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐ		906,953	(126,894)
Կանոնադրական կապիտալ	15	104,930	104,930
Պահուստային կապիտալ		377,882	377,882
Կուտակված շահույթ/վնաս		424,141	(609,706)
Ընդամենը սեփական կապիտալ		906,953	(126,894)

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Ընկերության ղեկավարության կողմից 2023թ. ապրիլի 21-ին:

Միքայել Սիրարյան
Տնօրեն

Գայանե Սառիկյան
Փորձագետ հաշվապահ ՀԳԳՀ 3 21 0614

	2022 հազար դրամ	2021 հազար դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բժշկական ծառայություններից մուտքեր	6,769,991	6,152,076
Այլ մուտքեր	17,872	27,830
	6,787,863	6,179,906
Նյութերի և դեղերի դիմաց վճարումներ	(3,229,946)	(2,733,941)
Ծառայությունների գծով վճարումներ	(327,817)	(332,553)
Վճարումներ աշխատակիցներին	(2,090,022)	(2,041,291)
Հարկային վճարներ	(577,204)	(715,513)
Այլ ելքեր	(3,574)	(8,065)
	(6,228,563)	(5,831,363)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	559,300	348,543
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից մուտքեր	-	-
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով ելքեր	(264,907)	(148,005)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(264,907)	(148,005)
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Վարկի ստացում		60,223
Վարկի մարում	(87,762)	(179,114)
Ստացված փոխառությունների և դրանց գծով տոկոսների մարումից	(3,210)	(55,763)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(90,972)	(174,654)
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	203,421	25,884
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով	112	(432)
Դրամական միջոցներ տարեսկզբի դրությամբ	31,041	5,589
Դրամական միջոցներ տարեվերջի դրությամբ	234,574	31,041

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Ընկերության ղեկավարության կողմից 2023թ. ապրիլի 21-ին:

Միքայել Աղամյան
Տնօրեն

Գայանե Սառիկյան
Փորձագետ հաշվապահ ՀԳԳՀ 3 21 0614

	Կանոնադրական կապիտալ հազ. դրամ	Այլ կապիտալ հազ. դրամ	Կուտակված շահույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
31 դեկտեմբերի 2021	104,930	377,882	(609,708)	(126,896)
Շահույթ	-	-	1,033,849	1,033,849
31 դեկտեմբերի 2022	104,930	377,882	424,141	906,953

	Կանոնադրական կապիտալ հազ. դրամ	Պահուստային կապիտալ հազ. դրամ	Կուտակված շահույթ հազ. դրամ	Ընդամենը հազ. դրամ
31 դեկտեմբերի 2020	104,930	377,882	(1,261,991)	(779,179)
Շահույթ	-	-	652,285	652,285
31 դեկտեմբերի 2021	104,930	377,882	(609,706)	(126,894)

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Ընկերության ղեկավարության կողմից 2023թ. ապրիլի 21-ին:

Միքայել Աղասյան
Գործադիր տնօրեն

Գայանե Սարիկյան
Փորձագետ հաշվապահ ՀԳԳՀ 3 21 0614

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր տեղեկություններ 11
2. Պատրաստման հիմունքներ 11
3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ 12
4. Ֆինանսական գործիքներ – ռիսկերի կառավարում 14
5. Հասույթ 17
6. Այլ եկամուտ 17
7. Ծախսեր ըստ բնույթի 17
8. Շահութահարկի գծով եկամուտ/(ծախս) 18
9. Պաշարներ 18
10. Առնտրային և այլ դեբիտորական պարտքեր 19
11. Հիմնական միջոցներ 20
12. Վարկեր 21
13. Առնտրային և այլ կրեդիտորական պարտքեր 22
14. Ակտիվներին վերաբերող շնորհներ 22
15. Բաժնետիրական կապիտալ 23
16. Գործարքներ կապակցված կողմերի հետ 23
17. Պայմանական պարտավորություններ 23
18. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր 24
19. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ 24
20. Իրական արժեքի չափման բացահայտումներ 27

1. Ընդհանուր տեղեկություններ

«Նորք-Մարաշ» Բժշկական Կենտրոն ՓԲԸ (Այսուհետ՝ Ընկերություն) ստեղծվել է Երևանի քաղաքապետի 25.02.1998թ. համար 75 որոշման համաձայն Երևանի քաղաքապետարանի «Թիվ 2 մանկական կլինիկական հիվանդանոց» առողջապահական պետական ձեռնարկության վերակազմավորման միջոցով և հանդիսանում է վերջինիս իրավահաջորդը: Ընկերության միակ բաժնետերը Երևան համայնքն է, որի անունից հանդես է գալիս Երևանի քաղաքապետը:

Ընկերության գրանցման համարն է 273.140.00911, վկայական համարը 01 Ա 013656, ՀՎՀՀ համարը 01508793:

Ընկերության հիմնական գործունեությունն է՝ բարձրակարգ բժշկական ծառայության մատուցումը, մասնավորապես.

- ախտորոշում,
- բժշկական խորհրդատվություն,
- բուժում,
- վիրաբուժություն,
- բժշկական կադրերի վերապատրաստում:

Մասնագիտական գործունեությունները կարող են իրականացվել միայն լիցենզավորված մասնագետների առկայության դեպքում, որը ամբողջությամբ կրում է պատասխանատվություն մասնագիտական գործունեության համար: Ընկերության և մասնագետների իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն:

Ընկերության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան,Ա. Արմենակյան 108/6:

2. Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՄՍ) և դրանց մեկնաբանությունների (հավաքականորեն՝ ՖՀՄՍ-ներ) պահանջներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 20-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության ֆունկցիոնալ արժույթը:

Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս՝ անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի հիման վրա:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք ուժի մեջ են 2022 թվականի հունվարի 1-ից

Չկան նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտել 2022 թվականի հունվարի 1-ից և որոնք էական ազդեցություն են ունեցել Ընկերության ապագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հրապարակված, սակայն դեռևս չգործող ՖՀՄՍ-ների նոր ստանդարտներ և փոփոխություններ

Առկա չեն նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք դեռ ուժի մեջ չեն մտել, որոնք կունենան կամ հնարավոր է ունենան ազդեցություն Ընկերության հետագա ֆինանսական հաշվետվությունների վրա:

3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այնուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրումների պատճառ հանդիսանալ:

Անընդհատության հիմունք

Ընկերության իրացվելիության ցուցանիշները նմանատիպ Ընկերությունների միջին ցուցանիշներից բավական ցածր են, մասնավորապես արագ իրացվելիության ցուցանիշը, որը չափում է ընկերության կարողությունը՝ մարելու կարճաժամկետ պարտքերը առավել իրացվելի ակտիվների օգնությամբ (դրամական միջոցներ և դեբիտորական պարտքեր) 2022թ. դեկտեմբերի 31-ի և 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է համապատասխանաբար 0.59 և 0.35 (միջին ընդունված ցուցանիշը՝ 1):

Թեև ընթացիկ տարում Ընկերությունը շահույթ է գոյացրել, այնուամենայնիվ, Ընկերությունն ունի կուտակված վնաս նախորդ տարիներից, որը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 126,894 հազար ՀՀ դրամ: 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ սեփական կապիտալը՝ ծածկելով նախորդ տարվա կուտակված վնասը, կազմել է 906,953 հազար ՀՀ դրամ

2021թ և 2022թ-ի շահույթը, հիմնականում մեծապես պայմանավորված են ՀՀ դրամ արտարժույթի վերագնահատման արդյունքով՝ եվրո արժույթով վարկի առկայությամբ (ծնթ. 12): Վարկը ստացվել է բժշկական սարքավորման ձեռքբերման նպատակով, որը երաշխավորված է ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից:

Ընկերության ղեկավարությունը մշակել և իրականացնում է ֆինանսական առողջացման միջոցառումների պլան, կատարում է լիկվիդայնության մշտական վերահսկողություն և կառավարում, որոնք միտված են.

- ✓ Պացիենտների քանակի ավելացմանը, և մահճակալների զբաղվածության մակարդակի աճին,
- ✓ Բժշկական ծառայությունների որակի և պացիենտների հետ փոխհարաբերությունների կառավարման շարունակական բարելավմանը,
- ✓ ԲԿ-ի գիտահետազոտական ներուժի զարգացմանը և ազդեցիկ մասնագետների ցանցի ընդլայնմանը,
- ✓ Գործընթացների ավտոմատացման և թվայնացման համակարգերի ներդրմանը,
- ✓ Ընկերությանը ոչ անհրաժեշտ հիմնական միջոցների շուկայական գներով օտարմանը,
- ✓ Ֆինանսա-տնտեսական արդյունքների և ցուցանիշների բարելավմանը:

Հաշվի առնելով Բժշկական կենտրոնի առանձնահատուկ դերը, որպես սրտի վիրահատության հիմնական և ճանաչված կենտրոն, ինչպես նաև պետական սեփականությունը (100% պատկանում է Երևան քաղաքի համայնքապետարանին)՝ ղեկավարությունը ակնկալում է, որ պետությունը կշարունակի աջակցել Ընկերության գործունեությանը և զարգացման ծրագրերին:

Ընկերության ղեկավարությունը, հիմնվելով կատարված դատողությունների վրա, ունի հիմնավորված ակնկալիք, որ Ընկերությունը կարող է շարունակել իր գործառնական գործունեությունը տեսանելի ապագայում: Ուստի Ընկերությունը շարունակում է որդեգրել անընդհատության սկզբունքը իր ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով:

Անտոկոս փոխառությունների չափում – ծնթ. 12:

Ընկերությունը միջպետական համաձայնագրի հիման վրա ստացել է անտոկոս վարկ Ավստրիական «Էրստե Գրուպ Բանկ» ՍՊԸ -ից 2017-2018թթ.-ներին բժշկական սարքավորումներ ձեռքբերելու նպատակով: Հաշվի առնելով առկա նմանատիպ վարկային համաձայնագրերում կիրառված տոկոսադրույքը, վարկը գնչվել է արդյունավետ տոկոսադրույքով իրական արժեքի և հաշվառվել ամորտիզացված արժեքի մեթոդով՝ համաձայն ՖՀՄՍ 9-ի (ծնթ. 12):
Ստացված վարկի անվանական արժեքի և սկզբանապես ճանաչված իրական արժեքի տարբերությունը ճանաչվել է ակտիվներին վերաբերող շնորհ՝ համաձայն ՀՀՄՍ 20-ի (ծնթ. 12):

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ակտիվի օգտակար ծառայության ժամկետը վերջինիս օգտագործման ժամկետի գնահատումն է: Հիմնական միջոցների միավորների օգտակար ծառայության ժամկետների գնահատումը դատողության հարց է, որը հիմնված է նման ակտիվների օգտագործման փորձի վրա: Ղեկավարությունը գնահատում է մնացորդային օգտակար ծառայության ժամկետները՝ ըստ ակտիվների ընթացիկ տեխնիկական վիճակի և տնտեսական գնահատված ժամանակահատվածի, որի ընթացքում ակնկալվում է, որ ակտիվները կազմակերպության համար օգուտներ կգեներացնեն: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա ֆինանսական հաշվետվություններում արտացոլված համապատասխան գումարները կարող են էականորեն տարբերվել (Ծնթ.20):

Պաշարների իրացման զուտ արժեքը

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է, արդյոք պաշարների զուտ իրացման արժեքը պակաս է դրանց ինքնարժեքից, և նման հանգամանքներում պաշարների ինքնարժեքը նվազեցնում է մինչև իրացման զուտ արժեք: Գնահատումները հիմնված են հաշվետու ամսաթվից հետո առկա հանգամանքների ուսումնասիրության վրա, ինչպես նաև մոտ ապագայում շուկայում սպասվող փոփոխությունների վերաբերյալ Ընկերության ղեկավարության սպասումների հետ:

Առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրելիություն – Ծնթ. 10

Առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրման հետ կապված հաշվապահական գնահատումները կապված են վարկունակության ռիսկերի հետ: Ծնթ. 10-ը վերաբերում է դրանց մեջ ֆինանսական ակտիվների և դեբիտորական պարտքերի վարկունակության ռիսկի գնահատմանը:
Վերոնշյալ գնահատումը հիմնված է ենթադրությունների և գնահատականների վրա, որոնք կարող են ներառել հետագա իրադարձություններին վերաբերող մի շարք ենթադրություններ:

Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

- *Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճգրտված)*

- *Մակարդակ 2. Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից*
- *Մակարդակ 3. Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)*

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

Կազմակերպությանը պատկանող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը հավասարվում է դրանց հաշվեկշռային արժեքին, քանի որ գեղչման ազդեցությունը աննշան է:

4. Ֆինանսական գործիքներ – ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ
- Արտարժութային ռիսկ
- Այլ գնային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ընկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Առևտրային դեբիտորական պարտքեր,
- Դրամական միջոցներ,
- Առևտրային կրեդիտորական պարտքեր,
- Վարկեր:

(բ) Ֆինանսական գործիքներ կատեգորիաներով

Ֆինանսական հաշվետվություններում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ խմբերին

	Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	
	2022թ.	2021թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Առևտրային դեբիտորական պարտքեր	293,707	445,656
Դրամական միջոցներ	234,574	31,041
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	528,281	476,697

Ֆինանսական պարտավորություններ

	Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ	
	2022թ.	2021թ.
	հազ. դրամ	հազ. դրամ
Վարկեր	2,660,026	3,489,302
Առևտրային կրեդիտորական պարտքեր	481,362	926,442
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	3,141,388	4,415,744

(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են՝ դրամական միջոցները, առևտրային դեբիտորական պարտքերը, առևտրային կրեդիտորական պարտքերը և վարկերը:

Դրամական միջոցների, առևտրային դեբիտորական պարտքերի, առևտրային կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը հավասար է իրական արժեքին՝ դրանց կարճաժամկետ բնույթի հետևանքով:

Ծանոթագրություն 21-ում ներկայացված են իրական արժեքի հիերարխիայի, գնահատման մեթոդների և առևտրային դեբիտորական և կրեդիտորական պարտքերի, վարկերի իրական արժեքի որոշման հետ կապված նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալների մանրամասներ, որոնք ընդգրկված են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

Ընդհանուր նպատակներ, քաղաքականություն և գործընթացներ

Ընկերության նպատակն է սահմանել քաղաքականություն, որը հնարավորինս կնվազեցնի ռիսկը՝ չանդրադառնալով նրա մրցունակության և ճկունության վրա: Այդ քաղաքականության մանրամասները ներկայացված են ստորև.

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկ է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ: Ընկերության առևտրային դեբիտորական պարտքը ներկայացնում է բուժ. ծառայությունների դիմաց ստացվելիք գումարները՝ հիմնականում Պետական առողջապահական գործակալությունից և ապահովագրական ընկերություններից ստացվելիք գումարները: Ընկերությունը դեբիտորական պարտքի գծով երաշխիք չի պահանջում:

Ընկերությունը առևտրային դեբիտորական պարտքերի գծով պահուստ է ձևավորել: Ընկերության առևտրային դեբիտորական պարտքերը բաժանվում են երկու խմբի Պետական պատվերով ծառայությունների և վճարովի ծառայությունների մասով: Այս դեբիտորական պարտքերի համար պարտքային ռիսկն ընդունելի է:

Առևտրային դեբիտորական պարտքերի վերաբերյալ հետագա բացահայտումները ներկայացված են Ծանոթագրություն 10-ում:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն առաջանում է Ընկերության տոկոսաբեր, առևտրային և արտարժութային ֆինանսական գործիքներից: Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի տատանումների ռիսկն է տոկոսադրույքի (տոկոսադրույքային ռիսկ), արտարժութային փոխարժեքի (արտարժութային ռիսկ) կամ այլ շուկայական գործոնների (այլ շուկայական գործոնների ռիսկ) հետևանքով:

Իրական արժեքի և դրամական միջոցների հոսքերի տոկոսադրույքային ռիսկ

Ընկերությունը չունի ստացված վարկեր և փոխառություններ՝ փոփոխական տոկոսադրույքով:

Արտարժութային ռիսկ

Արժութային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են արտարժույթի փոխարժեքների փոփոխությունների հետևանքով: Արժութային ռիսկին Ընկերության հակվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր արժույթով արտահայտված առևտրային գործարքների, ճանաչված ակտիվների և պարտավորությունների հետ:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության զուտ ենթարկվածությունը արտարժութային ռիսկին առաջացել է Եվրոյով ստացված վարկերից.

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Զուտ արտարժութային ֆինանսական ակտիվներ /(պարտավորություններ)		
Վարկեր-Եվրոյով արտահայտված	(2,660,026)	(3,361,369)
Ընդամենը զուտ ենթարկվածություն	**(2,660,026)**	**(3,361,369)**

Զգայունության վերլուծություն

Հաշվետու ամսաթվի դրությամբ Եվրոյի փոխարժեքը ՀՀ դրամի նկատմամբ կազմում է 420.06 (31.12.2021՝ 542.61):

Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի Եվրոյի նկատմամբ 5% արժեզրկումը (այլ տվյալների անփոփոխ մնալու դեպքում) կհանգեցներ տարվա արդյունքի (հարկումից հետո) և զուտ ակտիվների նվազմանը՝ 133,001 հազար դրամի չափով (2021թ.՝ 168,068 հազար դրամի չափով), իսկ 5% արժնորման ազդեցությունը՝ տարվա արդյունքի (հարկումից հետո) և զուտ ակտիվների ավելացմանը՝ նույն չափով:

Այլ գնային ռիսկ

Գնային ռիսկը այն ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի իրական արժեքը կամ ապագա դրամական հոսքերը տատանվում են շուկայական գների փոփոխության արդյունքում (բացի տոկոսադրույքային և արժութային ռիսկերից առաջացողներից): Ղեկավարությունը գնահատում է, որ հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը էականորեն չի տարբերվում նրանց ընթացիկ արժեքից:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը այն ռիսկն է, երբ Ընկերությունը դժվարություններ է ունենում այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են՝ դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվներ տրամադրելով:

Ընկերության ղեկավարությունը շարունակական մոնիտորինգ է իրականացնում Ընկերության իրացվելիության գծով՝ ապահովելու համար գործառնական գործունեության համար անհրաժեշտ դրամական միջոցների առկայությունը:

Ընկերությունը չունի ածանցյալ ֆինանսական պարտավորություններ:

Կապիտալին վերաբերող բացահայտումներ

Ընկերությունը իր կապիտալը կառավարում է՝ ապահովելու համար Ընկերության շարունակական գործունեությունը և մասնակիցների շահույթը:

Ընկերության կապիտալի կառուցվածքը ներառում է փոխառու միջոցները (ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորություններ) և սեփական կապիտալը (ներառող կանոնադրական կապիտալը, կուտակված շահույթը և կապիտալի այլ տարրերը):

Հաշվետու ամսաթվի դրությամբ և նախորդ տարեվերջի դրությամբ Ընկերության փոխառու միջոցների մեծ մասը կազմում է «Էրստե Գրուպ Բանկ» ՍՊԸ-ից ստացված վարկը: (ծնթ. 12):
Ընկերությունը չունի կապիտալի արտաքին ներգործության պահանջներ:
Ընկերության՝ որպես կապիտալ կառավարվող գումարները հաշվետու տարվա համար ամփոփված են ստորև.

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Վարկեր	2,660,026	3,489,302
Հանած՝ մնացորդներ դրամարկղում և բանկերում	(234,574)	(31,041)
Զուտ պարտք	**2,425,452**	**3,458,261**
Ընդհանուր սեփական կապիտալ	**906,953**	**(126,894)**
Պարտք/ Կապիտալ գործակից	**2.67**	**N/A**

5. Հասույթ

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Պետական պատվերով բժշկական ծառայությունների գծով	3,576,157	3,612,552
Վճարովի բժշկական ծառայությունների գծով	3,060,539	2,714,013
Ընդամենը	6,636,696	6,326,565

Բժշկական ծառայությունների գծով հասույթը ամբողջությամբ գեներացվում է ՀՀ, Երևան քաղաքում, գտնվող բժկական կենտրոնում մատուցված բժշկական ծառայությունից:

Բժշկական ծառայությունից հասույթը ճանաչվում է ծառայության մատուցման ընթացքում:

6. Այլ եկամուտ

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Ակտիվներին վերաբերող շնորհից	180,728	167,239
Եկամուտներին վերաբերվող շնորհից	8,999	16,868
Վարկի տոկոսի սուբսիդավորում	2,378	11,138
Այլ	11,779	17,185
	203,884	212,430

7. Ծախսեր ըստ բնույթի

	Ընդամենը		Ինքնարժեք		Վարչական ծախսեր		Այլ ծախսեր	
Հազ. դրամ	2022թ.	2021թ.	2022թ.	2021թ.	2022թ.	2021թ.	2022թ.	2021թ.
Դեղորայք և նյութեր	2,848,409	2,731,415	2,848,409	2,731,415	-	-	-	-
Աշխատակիցների հատուցում	2,752,266	2,792,467	2,337,948	2,365,938	414,318	426,529	-	-
Մաշվածություն և ամորտիզացիա	517,363	484,765	491,351	461,020	26,012	23,745	-	-

Գրասենյակային և կոմունալ ծախսեր	216,096	226,728	193,212	201,175	22,884	25,553	-	-
Չփոխհատուցվող հարկեր	10,965	16,776	-	-	10,965	16,776	-	-
Ապահովագրություն	12,282	16,744	-	-	12,282	16,744	-	-
Ծախսեր դեբիտորական պարտքերի կորուստի գծով	-	12,601	-	-	-	-	-	12,601
Անվտանգություն	11,122	9,970	-	-	11,122	9,970	-	-
Ծախսեր տույժերի, տուգանքների գծով	3,880	9,767	-	-	-	-	3,880	9,767
Այլ	53,400	36,753	-	-	52,412	33,639	988	3,114
	6,425,783	6,337,986	5,870,920	5,759,548	549,995	552,956	4,868	25,482

8. Շահութահարկի գծով եկամուտ/(ծախս)

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Ընթացիկ հարկի գծով ծախս / (Եկամուտ)	45,075	13,911
Հետաձգված հարկի գծով եկամուտ	(10,761)	(9,473)
Ընդամենը հետաձգված հարկ/(փոխհատուցում)	34,314	4,438

Հաշվետու տարվա համար ՀՀ «Շահութահարկի մասին» օրենքի համաձայն շահութահարկի դրույքաչափը սահմանված է 18% (2021թ.-18%):

Շահութահարկի արդյունավետ դրույքի համադրում՝

	2022թ.		2021թ.	
	Գումար Հազ. դրամ	Արդյունավետ տոկոս	Գումար Հազ. դրամ	Արդյունավետ տոկոս
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը	1,068,163		656,723	
Շահութահարկը՝ սահմանված դրույքով	192,269	18.00%	118,210	18.00%
Չհարկվող ծախսեր / (չհարկվող եկամուտներ), զուտ	(157,955)	(14.79%)	(113,772)	(17.32%)
Արդյունավետ հարկային ծախս/ (փոխհատուցում)	34,314	3.21%	4,438	0.68%

9. Պաշարներ

	2022 հազ. դրամ	2021 հազ. դրամ
Դեղորայք և բժշկական պարագաներ	532,339	520,883
Պահեստամասեր և տնտեսական նյութեր	116,780	129,252
Այլ նյութեր	16,038	13,647
	665,157	663,782

10. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Առևտրային դեբիտորական պարտքեր բժշկական ծառայությունների գծով		
- վճարովի հիմունքով	140,254	109,814
- պետական պատվերի հիմունքով	517,952	701,686
Այլ առևտրային դեբիտորական պարտքեր	972	774
Անհավաքելիության գծով պահուստ	(365,471)	(366,619)
Զուտ առևտրային դեբիտորական պարտքեր	**293,707**	**445,656**
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափով ֆինանսական ակտիվներ, բացի դրամական միջոցներից	***293,707***	***445,656***
Այլ	3,860	3,442
	297,567	449,098

ա) Ամորտիզացված արժեքով դասակարգված առևտրային դեբիտորական պարտքերի իրական արժեքը էականորեն չի տարբերվում հաշվեկշռային արժեքից:

բ) Ընկերությունը առևտրային դեբիտորական պարտքերի գծով վճարունակության ակնկալվող կորուստները գնահատելու նպատակով կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոտեցումը՝ օգտագործելով ողջ ժամկետի համար վճարունակության ակնկալվող կորուստների գնահատում: Առևտրային դեբիտորական պարտքերի գծով վճարունակության ակնկալվող կորուստների հավաքական գնահատման նպատակով դեբիտորական պարտքերը խմբավորվում են ըստ նմանատիպ ռիսկայնության և ժամկետայնության՝ առանձնացնելով վճարովի հիմունքով և պետական պատվերի հիմունքով պարտքերը:

Առևտրային դեբիտորական պարտքերի համար ակնկալվող վնասի պահուստը հետևյալն է.

2022	Ընթացիկ	Մինչև 90 օր ժամկետանց	90 օրից ավելի ժամկետանց	1 տարուց ավելի ժանկետանց	Ընդամենը հազ դրամ
Վճարունակության ակնկալվող կորստի դրույք	1.45%	2.38%	31.01%	100.00%	
Ընդամենը ընթացիկ արժեք	285,493	3,753	11,176	357,784	658,206
Կորստի գումար	4,132	89	3,466	357,784	365,471

2021	Ընթացիկ	Մինչև 90 օր ժամկետանց	90 օրից ավելի ժամկետանց	1 տարուց ավելի ժանկետանց	ընդամենը
Ակնկալվող կորստի դրույք	1.40%	2.38%	54.00%	100.00%	
Համախառն հաշվեկշռային արժեք	447,905	3,619	1,083	359,668	812,275
Կորստի պահուստ	6,280	86	585	359,668	366,619

11. Հիմնական միջոցներ

Հազ. դրամ	Հող	Շենք	Սարքավորումներ	Գրասենյակային և տնտեսական գույք	Անավարտ հիմնական միջոցներ	Այլ	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Սկզբնական արժեք							
Առ 1-ը հունվարի 2021թ	823,270	1,955,743	5,405,228	215,922	73,127	41,408	8,514,698
Ավելացումներ	-	73,127	250,640	5,328	(73,127)	-	255,968
Առ 31-ը դեկտեմբերի 2021թ	823,270	2,028,870	5,655,868	221,250	-	41,408	8,770,666
Ավելացումներ	-	-	104,084	7,144	-	5	111,233
Վերադասակարգում	-	-	14,802	18,429	-	(33,231)	-
Առ 31-ը դեկտեմբերի 2022թ	823,270	2,028,870	5,774,754	- 246,823	-	8,182	8,881,899
Կուտակված մաշվածություն և արժեզրկում							-
Առ 1-ը հունվարի 2021թ	141,565	222,738	3,417,088	164,199	-	7,805	3,953,395
Մաշվածություն	-	45,196	423,616	15,301	-	98	484,212
Առ 31-ը դեկտեմբերի 2021թ	141,565	267,934	3,840,704	179,500	-	7,903	4,437,607
Մաշվածություն ծախս	-	46,328	442,198	7,981			496,507
Առ 31-ը դեկտեմբերի 2022թ	141,565	314,262	4,282,902	187,481	-	7,903	4,934,114
Զուտ հաշվեկշռային արժեք							-
Առ 1-ը հունվարի 2021թ.	681,705	1,733,005	1,988,140	51,723	73,127	33,603	4,561,303
Առ 31-ը դեկտեմբերի 2021թ.	681,705	1,760,936	1,815,164	41,750	-	33,505	4,333,059
Առ 31-ը դեկտեմբերի 2022թ.	681,705	1,714,608	1,491,852	59,342	-	279	3,947,785

ա/ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության լրիվ մաշված հիմնական միջոցների սկզբնական արժեքը կազմել է 355,926 հազ. դրամ (2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 305,352 հազ. դրամ):

բ/ Ընկերությունը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չունի վարկային պարտավորությունների դիմաց գրավադրված հիմնական միջոցներ (31.12.2021թ.՝ 107 մլն դրամ):
գ/ Ընկերության արժեզրկման հայտանիշ ունեցող հիմնական միջոցների գծով իրականացվել է արժեզրկման գնահատում, նրանց այդ ամսաթվով ընթացիկ արժեքը համեմատելով նրանց փոխհատուցվող գումարի հետ՝ վաճառքի զուտ արժեզրի ու օգտագործման արժեքի առավելագույնը: Վաճառքի զուտ արժեքի գնահատման նպատակով Ընկերությունը ներգրավել է արտաքին անկախ փորձագետի:

12. Վարկեր

Ստորև ներկայացված են վարկերի և փոխառությունների հաշվեկշռային և իրական արժեքները՝

	Հաշվեկշռային արժեք 2022թ. հազ. դրամ	Իրական արժեք 2022թ. հազ. դրամ	Հաշվեկշռային արժեք 2021թ. հազ. դրամ	Իրական արժեք 2021թ. հազ. դրամ
Ոչ ընթացիկ				
Վարկեր				
-Գրավով չապահովված	2,660,026	2,660,026	3,361,369	3,361,369
	2,660,026	2,660,026	3,361,369	3,361,369
Ընթացիկ				
Վարկեր				
-Գրավով ապահովված	-	-	55,933	55,933
-Գրավով չապահովված	-	-	72,000	72,000
	-	-	127,933	127,933
Ընդամենը վարկեր և փոխառություններ	2,660,026	2,660,026	3,489,302	3,489,302

Ժամանակաշրջանի վերջին մնացորդ ունեցող վարկերի պայմանները հետևյալն են.

Փոխատու	Արժույթ	Տոկոսադրույք	Մարման տարի	2022թ. Հազ. Դրամ	2021թ. Հազ. Դրամ
«Էրստե Գրուպ Բանկ» ՍՊԸ	եվրո	0.0%	2036	2,660,026	3,361,369
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ	ՀՀ դրամ	11.4%	2022	-	55,933
«Արմսվիսբանկ» ՓԲԸ	ՀՀ դրամ	Ֆակտորի նզային տոկոսավճար	2022	-	72,000
				2,660,026	3,489,302

Ընկերությունը վարկ է ստացել ավստրիական «Էրստե Գրուպ Բանկ» ՍՊԸ-ից՝ միջպետական համաձայնագրի շրջանակում «Վամեդ Էնջինիրինգ» ՍՊԸ-ից հիմնական միջոցներ ձեռքբերելու նպատակով, 0% տոկոսադրույքով և գեղչվել է համանման վարկերի համար կիրառելի շուկայական տոկոսադրույքով՝ 3.5%-ով:

Ընկերությունը վարկ է ստացել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ից՝ ՀՀ կառավարության 2020թ. մարտի 26-ի թիվ 355-Լ որոշումով նախատեսված «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին միջոցառման» ծրագրի շրջանակներում, վարկի տարեկան տոկոսադրույքի ամբողջական սուբսիդավորմամբ:

Վարկերը ապահովված են հիմնական միջոցների գրավով, ծնթ. 11:

02.08.2019թ.-ին «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի և «Նորք-Մարաշ» ԲԿ միջև կնքվել է մինչև 350,000 հազար ՀՀ դրամի չափով ֆակտորինգային համագործակցության պայմանագիր, որի շրջանակներում 31/12/2022թ. դրությամբ օգտագործված մասը կազմում է 0 հազար ՀՀ դրամ, իսկ 31/12/2021թ. Դրությամբ օգտագործված մասը կազմել է 72,000 հազար ՀՀ դրամ:

13. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Առևտրային կրեդիտորական պարտքեր		
Պաշարների գծով	456,996	767,146
Հիմնական միջոցների գծով	10,160	137,678
Ծառայությունների գծով	14,206	21,618
Ընդամենը ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ, բացառությամբ՝ վարկերի	481,362	926,442
Ստացված կանխավճարներ	15,172	31,791
Հարկերի գծով	80,677	18,995
Չօգտագործված արձակուրդային պահուստ	269,132	247,609
Աշխատակիցների գծով	43,450	10,144
Ընդամենը	889,793	1,234,981

14. Ակտիվներին վերաբերող շնորհներ

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Տարեսկզբի մնացորդ	894,151	1,031,476
Ստացում	20,644	29,914
Շնորհից եկամտի ճանաչում	(180,867)	(167,239)
Տարեվերջի մնացորդ	733,928	894,151

Ակտիվներին վերաբերող շնորհներում ներառված է նաև պետական համաձայնագրի շրջանակում ստացված անտոկոս վարկի և նրա սկզբնական իրական արժեքների տարբերությունը (ծնթ. 12): Այն ամորտիզացվում է վարկային միջոցներով ձեռքբերված ակտիվների օգտագործմանը համապատասխան: 31.12.2022թ. դրությամբ այդ շնորհի գծով մնացորդը կազմում է 120,598 հազար դրամ (31.12.2021թ.՝ 228,303 հազար դրամ):

15. Բաժնետիրական կապիտալ

Ընկերության միակ բաժնետերը Երևանի քաղաքապետարանն է: Ստորև ներկայացված է Ընկերության բաժնետիրական կապիտալի կառուցվածքը:

Բաժնետեր	Բաժնետոմսերի քանակը	Բաժնետիրական կապիտալի չափը Հազ. դրամ
Երևանի քաղաքապետարան	10,493	104,930

16. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Առանցքային կառավարչական անձնակազմի հատուցումներ
Հաշվետու ժամանակաշրջանում Ընկերության առանցքային կառավարչական անձնակազմին տրված հատուցումները հետևյալն են.

	2022թ. հազ. դրամ	2021թ. հազ. դրամ
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ փոխհատուցումներ	74,016	131,627
	74,016	131,627

17. Պայմանական պարտավորություններ

Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետության ապահովագրական համակարգը գտնվում է զարգացման փուլում: Ապահովագրության շատ տեսակներ, որոնք տարածված են այլ երկրներում, Հայաստանում դեռևս չեն կիրառվում: Ընկերության պաշարները, հիմնական միջոցները, բացառությամբ հողի, ապահովագրված են: Այնուամենայնիվ, Ընկերությունը չունի ապահովագրություն բիզնեսի ընդհատումների և երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունների դեմ, որոնք կարող են առաջանալ Ընկերության տարածքում տեղի ունեցած դժբախտ պատահարներից կամ գույքի կամ շրջակա միջավայրի վնասներից կամ Ընկերության գործունեության արդյունքում պատճառված վնասներից:

Հարկային համակարգ

Հարկային համակարգը Հայաստանում համեմատաբար նոր է, որին հատուկ է հաճախակի փոփոխությունները: Վերջինս հաճախ անհասկանալի է, հակասական և պահանջում է մեկնաբանություն: Շատ դեպքերում, տարբեր հարկային և այլ լիազոր մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն այս կամ այն հարցի վերաբերյալ: Հարկային խնդիրները քննվում են հարկային մարմինների կողմից, որոնք օրենքով լիազորված են հաշվարկել տուգանքներն ու տույժերը:

Այլ երկրների համեմատ՝ այս փաստերը կարող են զգալի հարկային ռիսկ առաջացնել Հայաստանի Հանրապետությունում: Ղեկավարությունը կարծում է, որ Ընկերությունը չունի լրացուցիչ հարկային պարտավորություններ և դրանց համար որևէ դրույթ չի սահմանել:

Բնապահպանական խնդիրներ

Ղեկավարությունը կարծում է, որ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված ՀՀ օրենսդրության պահանջներին և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ նշանակալի պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, բնության պահպանության օրենսդրությունը Հայաստանում դեռ զարգացման փուլում է, և հնարավոր օրենսդրական փոփոխությունները և մեկնաբանությունները ապագայում կարող են լուրջ պարտավորություններ առաջացնել:

Դատական խնդիրներ

2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունի պայմանական պարտավորություն ընթացիկ դատական գործերի գծով, որոնց գնահատականը կազմում է 14,4 մլն դրամ:

18. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր

2022թ. փետրվարի 24-ին Ռուսաստանի Ֆեդերացիան լայնածավալ ռազմական գործողություններ սկսեց Ուկրաինայի Հանրապետության դեմ: Ռուսաստանի ներխուժումը արժանացավ միջազգային շատ երկրների դատապարտմանը, որն ուղեկցվեց Ռուսաստանի դեմ պատժամիջոցների կիրառմամբ, ինչի արդյունքում էլ Ռուսաստանի տնտեսությունը նշանակալի խնդիրների առաջ է հայտնվել: Ներկայումս, ռազմական գործողությունների ընթացքը և պատժամիջոցների ազդեցության հետևանքների ծավալը անկանխատեսելի է:
Հաշվի առնելով ՀՀ տնտեսության ու ներդրումային դաշտի համար Ռուսաստանի քաղաքական և տնտեսական ազդեցությունը, ինչպես նաև այն որ ՀՀ-ն Եվրասիական տնտեսական միության անդամ է՝ ստեղծված իրավիճակը անուղղակիորեն կարող է ազդել Հայաստանի ֆինանսական և տնտեսական համակարգերի կայունության վրա:
Ելնելով վերոնշյալ իրադարձությունների զարգացման անկանխատեսելիությունից՝ Ընկերության ղեկավարությունը հնարավոր չի համարում գնահատել վերոնշյալ դեպքերի ֆինանսական հետևանքը Ընկերության հաշվետվությունների վրա:

19. Հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ

Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

Կատարման պարտավորություններ և եկամուտների ճանաչման ժամկետներ
Ընկերության հասույթը ստացվում է բժշկական ծառայություններից, որոնց համար եկամուտը ճանաչվում է դրանց մատուցման ժամանակահատվածում:

Գործարքի գնի որոշում
Ընկերության հասույթը ստացվում է ֆիքսված գնի պայմանագրերից և, հետևաբար, յուրաքանչյուր պայմանագրից ստացվող եկամտի չափը որոշվում է՝ ելնելով այդ ֆիքսված գներից:

Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում արտարժույթի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները եւ պարտավորությունները վերագնահատվում են հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ որոշվող դրույքաչափերով: Չմարված դրամային ակտիվների եւ պարտավորությունների վերագնահատման արդյունքում առաջացող փոխարժեքային տարբերությունները անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների. ա) ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով (FVTPL); բ) իրական ակտիվով չափված ֆինանսական ակտիվները այլ համապարփակ եկամտի միջոցով (FVOCI). գ) ամորտիզացված արժեքով չափված ֆինանսական ակտիվներ: Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվներից բխող դրամական միջոցների հոսքերի բնույթից և բիզնես մոդելից, որի ներքո ակտիվը պահվում և նշանակվում է սկզբնական ճանաչման պահին:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես չափված «ամորտիզացված ինքնարժեքով», եթե այն համապատասխանում է հետևյալ երկու պայմաններին և չի նշանակվել որպես FVTPL- ում չափված.

- Այն անցկացվում է բիզնեսի մոդելի ներքո, որի նպատակն է ակտիվներ պահել պայմանագրային դրամական հոսքերը հավաքելու համար. և
- Դրա պայմանագրային պայմանները հանգեցնում են նշված ամսաթվերի դրամական միջոցների հոսքերի, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսների վճարումներ են:

Ֆինանսական ակտիվները, որոնք պարտքային գործիքներ են և չեն դասակարգվում որպես FVPOL- ում չափված, ենթակա են արժեզրկման փորձության՝ օգտագործելով ակնկալվող վարկային կորուստների մոդելը: Համաձայն այս մոդելի, վարկի կորստի պահուստը պետք է ճանաչվի ակնկալվող վարկային կորուստների չափով (ECL) հաշվետու օրվանից հետո 12 ամսվա ընթացքում: Այնուամենայնիվ, եթե գործիքի վարկային ռիսկը զգալիորեն աճել է նախնական ճանաչումից ի վեր, պահուստը պետք է ճանաչվի գործիքի ամբողջ կյանքի համար՝ ECL- ի չափով:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես «Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով» չափվող (FVTPL) կամ ամորտիզացված արժեքով չափվող:
Ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Բաժնետիրական կապիտալ

Ընկերության կողմից թողարկված ֆինանսական գործիքները դասակարգվում են որպես սեփական կապիտալ միայն այնքանով, որքանով դրանք չեն համապատասխանում ֆինանսական պարտավորության կամ ֆինանսական ակտիվի սահմանմանը: Ընկերության սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես բաժնային գործիքներ:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորը, որը ճանաչվում է որպես ակտիվ, չափվում է սկզբնական արժեքով: Սկզբնական ճանաչումից հետո հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:
Հիմնական միջոցի մաշվածության գումարն իր օգտակար ծառայության ընթացքում պարբերաբար բաշխվում է՝ կիրառելով մաշվածության հաշվարկման գծային մեթոդը: Հիմնական միջոցների օգտակար ծառայությունը առկա բոլոր հիմնական միջոցների համար արտահայտված է ժամկետով: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

Շենքեր	20-60 տարի
Սարքավորումներ	5-20 տարի
Արտադրատնտեսական գույք	5-10 տարի
Այլ	5-20 տարի

Շնորհներ

Շնորհները, որոնք որոշակի պայմաններով տրվում են կանոնադրական գործունեության իրականացման նպատակով, ճանաչվում են իրենց իրական արժեքով, երբ կա հիմնավորված երաշխիք, որ.

ա) Ընկերությունը կատարելու է շնորհներին հարակից պայմանները, և
բ) շնորհներն ստացվելու են:

Հիմնական միջոցներին վերաբերող շնորհները հետաձգվում են և ճանաչվում են շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:
Ծախսերին վերաբերող շնորհները հետաձգվում են և ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջաններում, որոնց ընթացքում դրանք փոխհատուցում են այն ծախսումները, որոնց համար ստացվել են:

Պաշարներ

Պաշարները՝ դեղեր, բժշկական պարագաներ և այլն, ներկայացված են ինքնարժեքի և հնարավոր իրացման զուտ արժեքի նվազագույնով: Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է ԱՄԱԵ (առաջինը մուտք, առաջինը ելք) արժեքի բանաձևով:

Բժշկական ծառայությունների մատուցման մեջ օգտագործելու նպատակով պահվող դեղերը և այլ պաշարները չեն վերագնահատվում ինքնարժեքից ցածր, քանի որ ակնկալվում է, որ ծառայությունը, որի մատուցման նպատակով դրանք օգտագործվելու են, իրացվելու է ինքնարժեքին հավասար կամ գերազանցող գնով:

Դեղերը կամ բժկական պիտույքները, որոնց օգտագործման ժամկետը սպառվել է, կամ այլևս պիտանի չեն օգտագործման այլ հանգամանքներով դուրս են գրվում համապատասխան ժամանակաշրջանում:

Պահուստներ

Ընկերությունը ճանաչել է անորոշ ժամանակի կամ գումարի պարտավորությունների պահուստներ: Պահուստը չափվում է հաշվետու ամսաթվի դրությամբ պարտավորությունը մարելու համար անհրաժեշտ ծախսերի լավագույն նախահաշվով, գեղչվում է նախահարկի դրույքաչափով՝ արտացոլելով փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումները և պարտավորությանը հատուկ ռիսկերը:

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

Երբ աշխատակիցը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը մատուցել է ծառայություն, աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չգեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայության դիմաց, ճանաչվում է:

ա) որպես պարտավորություն արդեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չգեղչված գումարը, Ընկերությունը այդ տարբերությունը ճանաչում է որպես ակտիվ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

բ) որպես ծախս, եթե այն չի ներառվում մեկ ուրիշ ակտիվի հաշվեկշռային արժեքի մեջ:

Շահութահարկ

Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս և ներառվում տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթի կամ վնասի մեջ:

Ընթացիկ հարկը տվյալ ժամանակաշրջանի հարկվող շահույթի գծով վճարման ենթակա շահութահարկի գումարն է: Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկեր

Ընկերության հետաձգված հարկերը (հետաձգված հարկային պարտավորությունները և հետաձգված հարկային ակտիվները) պայմանավորված են ժամանակավոր տարբերությունների (հարկվող և նվազեցվող ժամանակավոր տարբերություններ) և չօգտագործված հարկային վնասը հաջորդ ժամանակաշրջաններ տեղափոխելու հետ:

Ժամանակավոր տարբերությունների հետ կապված հետաձգված հարկերը հաշվարկվում են՝ օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվող ակտիվների և

պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակով օգտագործվող գումարների (հարկային բազայի) ժամանակավոր տարբերությունների վրա:
Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմնվելով հարկերի այն դրույքների վրա, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Առանցքային կառավարչական անձնակազմի գծով բացահայտումներ

Ընկերությունը բացահայտում է առանցքային կառավարչական անձնակազմի.

- հատուցումները՝ կարճաժամկետ կամ հետաշխատանքային,
- ազատման նպաստները,

20. Իրական արժեքի չափման բացահայտումներ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է այն ակտիվները և պարտավորությունները, որոնց իրական արժեքները բացահայտվել են ծանոթագրություններում.

Հոդված	Իրական արժեք հազ. դրամ	Գնահատման մեթոդ	Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ
Վարկեր	2,660,026	*Ընթացիկ* Բանկային վարկերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 2	3.5% արդյունավետ տոկոսադրույք եվրոյով և 11% ՀՀ դրամով մնացորդների համար
Առևտրային դեբիտորական պարտքեր	293,707	*Ընթացիկ* Կարճաժամկետ (12 ամսից պակաս) դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	481,362	*Ընթացիկ* Կարճաժամկետ (12 ամսից պակաս) կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ